Հաստատված է
ԳՊՀ գիտական խորհրդի
2020թ. փետրվարի 29-ի թիվ 2 նիստում
Ռեկտոր՝ Ռ. Խ. Հակոբյան
«29» փետրվար 2020թ.

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

(փոփոխություններով)

1. Գավառի պետական համալսարանում (այսուհետ՝ Համալսարան) ֆինանսական ռեսուրսների (այսուհետ՝ ՖՌ) կառավարման քաղաքականությունն իրականացվում է օրինականության, հրապարակայնության, թափանցիկության, հաշվետվողակա-նության, սոցիալական արդարության և ազնվության, ֆինանսական միջոցների նպատակային և խնայողաբար օգտագործման սկզբունքներով:
2. Համալսարանը ՖՌ կառավարման քաղաքականությունը մշակում է ինքնուրույն՝ Հայաստանի Հանրապետության օրենքներին, Համալսարանի կանոնադրությանը, Համալսարանի հիմնադրի, ՀՀ կրթության կառավարման լիազոր մարմնի, Համալսարանի հոգաբարձուների խորհրդի ընդունած որոշումներին համապատասխան:
3. Համալսարանում ՖՌ կառավարման հիմնական ուղղություններն են.
   1) ֆինանսական ռեսուրսների պլանավորումը,
   2) ֆինանսական ռիսկերի կանխատեսումն ու նվազեցումը,
   3) ֆինանսավորման այլընտրանքային միջոցների որոնումը,
   4) ֆինանսական գործունեության արդյունքների գնահատումը և բարելավումը:
4. Համալսարանում ՖՌ կառավարման հիմնական գործառույթներն են.
   1) Համալսարանի առաքելության և ռազմավարական նպատակների իրականացումն ու կրթական ծրագրերի շարունակականությունն ապահովող ֆինանսական միջոցների հավաքագրումն ու արդյունավետ բաշխումը,
   2) ֆինանսական միջոցների նպատակային և խնայողաբար օգտագործման կառուցակարգերի մշակումն ու գործարկումը,

3) ֆինանսական գործունեության արդյունքների գնահատումը,

4) ուսանողներին, դասավանդողներին տրամադրվող ֆինանսական, նյութական, տեխնիկական ռեսուրսների արդյունավետության և հասցեականության ապահովումը:

5. Համալսարանի ՖՌ պլանավորման և զարգացման մեթոդներն են.

1) առկա ֆինանսական ռեսուրսների համալիր վերլուծությունը,

2) առկա ֆինանսական ռեսուրսների համեմատությունը ապագայում անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների հետ՝ կարիքների բացահայտման նպատակով,

3) ֆինանսական, նյութական, տեխնիկական անհրաժեշտ ռեսուրսների վերաբերյալ լուծումների մշակումն ու իրականացումը՝ Համալսարանի առաքելության, նպատակների և խնդիրների իրականացման համար,

4) ֆինանսական ռեսուրսների պլանավորման մոդելի արդյունավետության ապահովումը:

6. Համալսարանում ՖՌ կառավարման քաղաքականության իրականացումը համակարգում է Համալսարանի ռեկտորը:

7. Համալսարանի ռեկտորը՝

1) ղեկավարում է Համալսարանի ֆինանսական գործունեությունը,

2) հետևում է Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության ֆինանսական, նյութատեխնիկական հիմքերի ապահովմանը,

3) տարեկան ֆինանսական հաշվետվություն է ներկայացնում Համալսարանի հոգաբարձուների խորհրդին,

4) Համալսարանի հոգաբարձուների խորհրդի հաստատմանն է ներկայացնում եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը,

5) հետևում է տարեկան բյուջեի կատարմանը՝ եկամուտների և ծախսերի հոդվածներին համամասնորեն,

6) ապահովում է Համալսարանի հարկային, պայմանագրային և այլ ֆինանսական պարտավորությունների պատշաճ կատարումը,

7) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:

8. Համալսարանն ունի առանձնացված գույք, որը հաշվառվում է ինքնուրույն հաշվեկշռում, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

9. Համալսարանն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով բացելու բանկային հաշիվ-ներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ Հայաստանի Հանրապետության դրամով և (կամ) արտարժույթով:

10. Համալսարանի կրթական, ուսումնամեթոդական, գիտական, սոցիալ-մշակութային գործունեությունը ֆինանսավորվում է հետևյալ աղբյուրներից՝

1) վճարովի հիմունքներով սովորող ուսանողների ուսման վարձավճարներից,
2) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից,
3) Համալսարանի վճարովի ծառայություններից ստացվող միջոցներից,
4) դրամաշնորհային ծրագրերից,
5) իրավաբանական ու ֆիզիկական անձանց նվիրատվություններից, բարեգործական նպատակով տրամադրվող միջոցներից,
6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

11. Համալսարանի գործունեության ընթացքում ստացված ամբողջ եկամուտը օգտագործվում է Համալսարանի կանոնադրական նպատակների իրականացման համար:

12. Համալսարանն իր կանոնադրությանը համապատասխան՝ իրավունք ունի.

1) տնօրինել, օգտագործել և տիրապետել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը, այդ թվում՝ մասնաշենքը,
2) օգտագործել հիմնադրի կողմից Համալսարանին տրամադրված գույքը,
3) իր գույքը հանձնել վարձակալության՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,
4) կառավարել իր ֆինանսները, ինքնուրույն որոշել իր ֆինանսական միջոցների օգտագործման ուղղությունները, ներառյալ իր աշխատողների վարձատրության և նյութական խրախուսման կարգն ու չափերը,
5) սահմանել ուսանողների նկատմամբ կիրառվող ուսման վարձերի զեղչեր, կրթաթոշակներ,
6) ծավալել հրատարակչական, տպագրական գործունեություն, իրացնել դրա արդյունքները, կազմակերպել գրքերի, այլ տպագրական և գրենական նյութերի վաճառք,
7) լրացուցիչ կրթական ծրագրերի շրջանակում կազմակերպել վճարովի դասընթացներ,
8) իրականացնել դրամաշնորհային ծրագրեր, մասնակցել միջազգային և տարածաշրջանային նախագծերի,
9) ապահովել աշխատողների, սովորողների և այլ անձանց հանրային սննդի, հանգստի, բուժման, կենցաղի, սպասարկման կազմակերպումը,
10) մատուցել համակարգչային, տեղեկատվական, տեխնիկական ծառայություններ,
11) իրականացնել օրենքով և Համալսարանի կանոնադրությամբ չարգելված այլ գործունեություն:

13. Համալսարանը պարտավոր է օրենքով սահմանված կարգով.

1) վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում,
2) ներկայացնել ֆինանսական հաշվետվություններ,

3) ֆինանսական ռեսուրսների և նյութատեխնիկական պաշարների մասին տեղեկատվություն ներկայացնել պետական իրավասու մարմիններին,
4) իրականացնել գույքի տարեկան հաշվեգրում (ինվենտարիզացիա),
5) Համալսարանի կարիքների համար կազմակերպել գնումների գործընթաց,
6) կնքել պայմանագրեր և ապահովել դրանց պատշաճ կատարումը,
7) իրականացնել օրենքով սահմանված այլ պարտականություններ։

14. Համալսարանն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում իրեն պատկանող գույքով:

15.Համալսարանի ՖՌ կառավարման նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով։